«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

1. **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում**

2026 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից պլանավորված է եղել իրականացնել 31 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի տարածքային մակարդակի գնահատում: Արդյունքում իրականացված 29 ԿԱՊԿ և ԿՁԱՊԿ գնահատումներից դպրոցներում իրականացվել են 14 և 15 նախադպրոցական տարիքի երեխաների գնահատում: Նախադպրոցական տարիքի 15 երեխաներից 13-ը հաճախում են ՆՈՒՀ, իսկ 2-ը չեն հաճախում, և նրանց կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի տարածքային մակարդակի գնահատումը կազմակերպվել է ծնողների դիմումների հիման վրա: Գնահատումների արդյունքում բոլոր երեխաները կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեն: Պլանավորված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կայանում է նրանում, որ երկու երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի տարածքային մակարդակի գնահատումը կիրականացվի երրորդ եռամսյակում:

2. **Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում**

2026 թվականի առաջին և երկրորդ եռամսյակի համար Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից պլանավորված է եղել իրականացնել թվով 120 երեխայի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում, որից՝ 23-ը ՆՈՒՀ-ի սաներին, 96-ը՝ դպրոցի աշակերտներին և 1-ը՝ քոլեջի: Արդյունքում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից օգտվել են 119 երեխա, որից 27-ը նախադպրոցական տարիքի, 91-ը՝ դպրոցական և 1-ը՝ քոլեջի ուսանող: Միայն ուսումնական հաստատության կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից օգտվել է 1 սան, իսկ տնային ուսուցումից՝ 4 աշակերտ: Փաստացի և պլանավորված ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ հունվար և փետրվար ամիսներին 3 սովորողներ տեղափոխվել են այլ մարզեր:

## 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

2026 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների համար պլանավորած է եղել իրականացնել վերապատրաստումներ Սիսիանի տարածաշրջանի թվով 27 ուսումնական հաստատություններում՝ 4 ՆՈՒՀ, 23 դպրոց, իրականացվել են վերապատրաստումներ թվով 30 ուսումնական հաստատություններում: Վերապատրաստուներն իրականացվել են ինչպես պլանավորված, այնպես էլ ըստ համագործակցող կառույցների պահանջի: Վերապատրաստումներին մասնակցել են թվով 482 մարդ: Անցկացված վերապատրաստումները անցել են ակտիվ և համագործակցային մթնոլորտում և կրում են շարունակական բնույթ:

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում | 32 |
| 2 | <<Գիտակից ծնողավարությունը որպես երեխայի զարգացման կարևոր գործոն>> | 112 |
| 3 | <<Գնահատման գործընթացի կազմակերպումը ՆՈւՀ-ում>> | 4 |
| 4 | <<Կրթության աջակցող միջոցներ. մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ>> | 162 |
| 5 | <<Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ>> | 154 |
| 6 | Անհատական ուսուցման պլան | 18 |

## 4. Խորհրդատվություն

2026 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորած է եղել իրականացնել խորհրդատվություններ Սիսիանի տարածաշրջանի թվով 35 ուսումնական հաստատություններում՝ 4 ՆՈՒՀ, 23 դպրոց, 1 քոլեջ, իրականացվել է շուրջ 36 ուսումնական հաստատություններում: Տրամադրված 188 խորհրդատվությունից օգտվել է 192 անձ՝ պլանավորված 177-ի փոխարեն: Խորհրդատվությունները տրամադրվել են ըստ պահանջի: Փաստացի և պլանավորված ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ԿԶԱՊԿ և ԿԱՊԿ գնահատման գործընթացին միացել են ՆՈՒՀ-երի նոր գործող խմբեր և դպրոցներ: Նոր ԿԱՊԿ գնահատումներով պայմանավորված՝ խորհրդատվություն ստացած անձանց թիվը մեծ է պլանավորված ցուցանիշից: Ինչպես նաև խորհրդատվություններ են տրամադրվել ԵՊ թիմերի կազմավորում և թիմերի գործառույթների թեմայով:

## 5. Մշտադիտարկում

2026 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար Սիսիանի տարածաշրջանի ուսումնական հաստատություններում պլանավորած է եղել իրականացնել թվով 48 մշտադիտարկում սպասարկվող տարածքի 43 ուսումնական հաստատություններում: Իրականացվել է 45 մշտադիտարկում՝ 35 դպրոց, 4 ՆՈՒՀ և Սիսիան համայնքի վարչատարածքային միավորումներում գործող ՆՈՒՀ-երին կից 7 գործող խմբերում: Փաստացի և պլանավորված ցուցանիշների տարբերությունը պայմանվորված է նրանով, որ մշտադիտարկումներ են իրականացվել Սիսիան համայնքի վարչատարածքային միավորումներում՝ Սիսիանի ՆՈՒՀ-երին կից գործող խմբերում՝ Սիսիան համայնքի թիվ 3 ՆՈՒՀ-ին կից Բնունիսի, Սալվարդի, Աշոտավանի և Ույծի, 2 ՆՈՒՀ-ին կից Աղիտուի, Սիսիանի թիվ 1 ՆՈՒՀ-ին կից Գորայքի և Ծղուկի: Գործող խմբերը Սիսիանից գտնվում են միջինում 30-35 կմ հեռավորության վրա:

Մշտադիտարկումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝ ԿԱՊԿ գնահատման գործընթաց, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, ուսումնական գործընթացի ներառականություն՝ կրթության աջակցող միջոցներ. մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ, հաստատության հոգեբանների կողմից մատուցած ծառայություններ, ծնող-ուսուցիչ-հաստատություն համագործակցություն: Մշտադիտարկման արդյունքում վերհանված խնդիրները հիմնականում ՏՄԱԿ-ի մասնագետների օգնությամբ լուծվել են:

## 6. Ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ

2026 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար Սիսիանի տարածաշրջանի ուսումնական հաստատություններում ֆիզիկական միջավայրի հարմարեցումների ապահովում տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից պլանավորված չի եղել:

## 7. Խելամիտ

2026 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար Սիսիանի տարածաշրջանի ուսումնական հաստատություններում խելամիտ հարմարեցումներ է ապահովվել տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից սպասարկվող 7 ուսումնական հաստատություններում: Խելամիտ հարմարեցումներ է ստացել թվով 12 երեխա: Փաստացի և պլանավորված ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ ՆՈՒՀ-երից միայն Սիսիանի թիվ 1 ՆՈՒՀ-ն է ձեռք բերել 5 ԿԶԱՊԿ ունեցող սանի համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումները:

## 8. Համագործակցություն

Սիսիանի ՏՄԱԿ-ը մշտապես համագործակցում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ և ստանում անհանգստացնող հարցերի պատասխաններ և ակնկալվող մեթոդական օգնություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողները, Սիսիանի ՏՄԱԿ-ի մասնագետները ակտիվորեն մասնակցում են ՀՄԿ-ի կողմից կազմակերպված հեռավար դասընթացներին, ինչպես նաև Ամերիկայի Պերկինսի Միջազգային Կույրերի դպրոցի աջակցությամբ կազմակերպված վեբինարների շարքին: Սիսիանի ՏՄԱԿ-ը համագործակցում է ՀՄԿ-ի՝ Սյունիքի մարզի մենթոր Արմինե Մեծրիցյանի հետ:

Համագործակցություն է ձևավորվել «Հանրային խորհրդատվության և հետազոտությունների կենտրոն» և «Դարման» սոցիալ-առողջապահական ՀԿ-ներ հետ «ԻՄ ՀԱՐՄԱՐ ՏՈՒՆԸ» նոր սոցիալական ծառայություն հաշմանդամություն ունեցող անձանց համար ծրագրի շրջանակներում:

Համագործակցում ենք նաև Կարմիր Խաչի հայաստանյան գրասենյակի և այն բոլոր կառույցների հետ, որոնք ստեղծված են և աշխատում են ի շահ երեխայի, ի շահ երեխայի իրավունքի:

Համագործակցում ենք Սիսիանի համայնքապետարանի, ՄՍԾ Սիսիանի տարածքային կենտրոնի հետ: Մասնակցել ենք ՄՍԾ Սիսիանի տարածքային կենտրոնում կազմակերպված հանդիպում-աջակցող ցանցի ֆորումին՝ սոցիալական համագործակցության շրջանակում կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի և առկա խնդիրների վերաբերյալ: Հանդիպման ընթացքում քննարկվեց կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման հարցը և կարևորվեց շահագրգիռ կառույցների համագործակցությունը: Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը ակտիվորեն մասնակցեցինք Սիսիանի համայնքապետարանի կողմից կազմակերպված համայնքային միջոցառմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել թվով 25 ուսումնական, զարգացնող ու աշխատանքային նյութեր (դիդակտիկ պարագաներ, խաղեր, տեխնոլոգիաներ) և 1 ավազե տուփ՝ կենտրոնում մանկավարժահոգեբանական աջակցություն ստացող երեխաների հետ տարվող աշխատանքներն ավելի արդյունավետ և հետաքրքիր կազմակերպելու նպատակով:

| | |
|---|---|
| Կենտրոնի անվանումը՝ | <<Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>> ՊՈԱԿ |
| Տնօրենի պարտականությունները կատարող՝ | (ստորագրություն) / Լիլիթ Դովլաթյան (անուն, ազգանուն) |

Կ.Տ.

« 01» «07» 2026թ.